

եթէ գործը յանձնուած լինէր հոգեորականի շատ զիւրաւ և կանուխ այն պատրաստած նիւթերը ազատուած կմնային փտութենից, Գարձընենք մեր ուշադրութիւն Արարադու, Երեւանու, Սզնախու և այլ քաղաքների և զիւրոքից զպրոցների վրայ, թէ ռըբան աննախանձելի դրութեան մէջն են Եւ այսպէս մոռանալով իրենց պարտաւորութիւնը, և չըկարողանալով գէթ մի փոքր մասը ազգային գործոց կառավարելը, սկըսում են նախատել հոգեորականութեան, և այն հոգեորականութեան, որ իրրեւ հովանի ծառ պահպանած է իր ժողովուրդը բազմադարեան նեղութենից և ազատած զանազան թշնամիներից, և այսօր այդչափ երախտեաց փոխարէն « յառնեն որդիք ի վերայ հարցւոյ՝ կարծելով թէ որդւոց չպէտք է կուլ տայ ծերունի շատակեր Առնուօրը :

ՁԱԲԻՈՍ.

Յ 8 2 ֆեբրւարի 1876 - 2

Ի Գանչակ.

Ամառկազիրն ևս չարաչար կըսխալուի իրր Գըլէնէ ամէն Բան միայն եկեղեցականաց յանձնել կամ նոցա ձեռքում թողուլ կականարկէ :

Պէտք չէ խտրութիւն դնել, որոյ հետեանքն է՝ որ ի տեղիս տեղիս քանի քանի տեսակ խնդրոց և գործոց մէջ երիտասարդք և չափահասակք կամ ծերունիք միմեանց դէմ կելնեն և կմեքենայեն : Գուցէ երբեմն եկեղեցականներէն ոմանք առաջնորդ կամ շարժառիթ եղած լինին խտրութեան, որ մեր Ակեղեցւոյ համար նոր և խիստ վնասակար մի դրութիւն է, սակայն երբէք չպիտի ներուի ումեք՝ որ խտրութիւն քարոզէ :

Արբ մի քանի թերութումն կամ օտար և պղտոր դաստիարակութեամբ սնած և զարգացած երիտասարդներ յանդուգն և չարաչար կ յարձակվին եկեղեցականաց վի-

րայ, նոքա եթէ ունենան մի քանի իրաւացի կէտեր ևս, դարձեալ երբ և իցէ կկորուսանեն իւրեանց ազդեցութիւնը և նշանակութիւնը, և ինքեանք զինքեանս յաւէտ կխայտառակեն : Բայց և այնպէս՝ եկեղեցականաց արժան և վայել է՝ որ չարին չար չփոխանակեն և համբերութեամբ տանին անփորձ և օտարագործիք երիտասարդաց ոմանց մեքենայութիւնքը, միանգամայն ջանալ և միշտ հետեւել խրատել յորդորելոյ համար՝ որ նոքա զգաստանան և զգուշանան, անկեղծ սիրով և անխարդախ սրտով միանալով ընդ եկեղեցականաց՝ այնպէս գործեն յօգուտ Ազգի և Ակեղեցւոյ Հայաստանեայց : Միանգամայն պէտք է ջանալ, որ եթէ ի ներկայս Ժողովրդեան դրութիւնն չնեղեր, գոնէ պարաստինք ըստ արժանւոյն՝ որ յապագային Ժողովուրդն իւր ձայնը ունենայ ոչ միայն թեմական և առաջնորդական խնդրոց՝ այլ նաեւ ուրիշ շատ ազգօգուտ գործոց և պտրագաներու մէջ՝ ինչպէս որ ի նախնեաց հետէ սովորութիւն եղած է :

ԳՈՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑ.

Խճաբար-Եւան Արարադ.

Գորոյ Հայոց Գարոցը իրաւ որ մինչև 1860 թիւը՝ մեծ տգիտութեան մէջ էր գտնուում, և նայելով Գորեցւոց իր որդւոց վատարագ դրութեան՝ և այժմեան լուսաւորեալ դարուն, ընտրեցին իրենց մէջ քրտնաջան հոգաբարձուներ, որոնք բարեսիրական հոգով վաւած, ոտքի տակ առնելով մաքրաւայել ընթացքը՝ որոնեցին վարժապետները և նոյն պաշտօն յանձ-

Նեղին Վանեցի Մ. Պլոգեանցին, և տեղոյս
Բարեկ. Ստեփաննոս քահանայ Տէր Ստեփան-
եանցին՝ որ այժմ Թէմական Վերադարձ է.
սորբա հայրենասէր եռանդով վառած, անկեղծ
հոգով սկսան վարել իրենց ուսուցչութեան
պաշտօնը՝ շնայելով իրենց սակաւ բոծկին:

Դպրոցի տարեկան ելեմուտ որ օգոստ 1870 ից՝ մէկն երկուս դարձաւ, ուստի ուսմունք էլ պիտի աւելնար, մանաւանդ որ շատ տեղերը դպրոցներ բացուեցան, ըստ բաւականին ընդունակ և ընտիր վարժապետներ բաժանուեցան, Թէմական Վե-րատեսչութիւնք Հաստատուեցան, բայց աւա՜ղ, որ տեղոյս Դպրոցը յետին զրութեան մէջ ըն-կաւ, և բազմադիւն Պուզեանցի առարկաները փոխուեցան Հասարակ ընթերցանութեանց, որոց դասախօսութիւնը այժմեան ուսուցիչ Լ. . . ի ձեռով կաւանդուի. Երան՛ թէ այս դասա-տլուութիւնս էլ օրինաւոր լինէր և ամսավերջին շնայիով, քննել աշակերտին իր խօսած դասերը, Թէ որ որևիցէ աշակերտին Հարցնելու լինի՛ք սողնոց կամ զեռնոց անունները, իսկոյն կպա-տասխանեն մէկ Դէմք և Դէմք՝ թէ և Հե-ղինակի մէկնութիւնն էլ տակն և գրած, սակայն ոչ սողուն կայ միատեսակ և ո՛չ զեռուն. Բաց ի սորանից՝ դարմանալի է Պ. Լ. . . ի դասախօ-սութիւնը, կնատի Թմոսի վերայ և ձեռքին կառնէ դասագիրք, կկարդայ բարձր ձայնով երեք կամ չորս թերթ և կկանչէ «Հասկացա՛ք». խեղճ աշակերտները վախից իսկոյն կասեն «այո՛ վար-ժապետ», իսկ եթէ աշակերտի մէկն Համարձակի պատասխանելու «Հասկացանք», նոյն րոպէին կառնէ ոտքի տակ և նրա լացն և աղաղակ եր-կինք կբարձրանայ մինչև իր կատարութիւնը կը զիջնէ Զգիտեմ՝ թէ որ իրաւամբ կվարուի դա-յդպէս անողորմաբար աշակերտաց հետ. հուսկ յետոյ կհրամայէ «այս իմ կարգացածը բերան պիտի սովորիք», տեսէք սիրելի ընթերցողներ, և զեռես Հայերէն խօսել չգիտեն և ե՞րբ պիտի բերան առնեն այլքա՛ տրուած դասը, ո՞վ գիտէ՛ մինչև տաս օր. Ահա այսպիսի դասախօսութեան, մանաւանդ առարկայից նուաղութեան պատճա-ռաւ, յետին զրութեան մէջ և ձգուած դպրոցս. Աւստի խում ենք որ՝ տեղոյս զիտնական Թեմա

Կան վերատեսուչք մտադիր է այս թերութիւնն
նորը լրացնելու:

ԳԵՈՐԳ ԳԱԼԱՆԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻ:

b. 46 - 2 ϕ_{1-7}^2 1876 - 7

1. 4. 9. 10. 11.

Թէեւ ներկայ դրութիւնը Հրատարակելով՝ հարկ էր պաշտօնական գրութեամբ հաղորդել Թ.Բ.Մ. Վերատեսչին և բացատրութիւն միանգամայն կարգադրութիւն պահանջել, տակաջն այլոց ի զգուշութիւն ազգելոյ համար՝ այս անգամ բացատրութեան տրուեցաւ, միանգամայն Տփլսեաց Թ.Բ.Մ. Վերատեսչի ուշադրութեան յանձնելով՝ կշռամբ որ շուտով բացատրութիւն կտայ՝ կարելորդ ևս հոգալով:

ԱՌ ՄՇԱԿՆ.

Մշակ լրագիրը քանի մը ժամանակէ
հետէ չըզդիտեմ՝ ի՞նչ խեղապատակէն թէ
յայլոց զրդեալ՝ ձեռնարկած է ուղղակի
և անուղղակի յարձակումներ ընել Հայ-
կական կրօնի, լեզուի և Մայր Աթոռոյ
գործառնութեանց վերայ, ջանալով ան-
հնարին յանձնապատասխանութեամբ իւր
հակազգային ձգտումներն ու գաղափար-
ները ընդունել տալ հասարակութեան
իրբև ժամանակի անհրաժեշտ պիտոյք և
ամենագիւրջին միջոց ազգային դաստիա-
րակութեան:

Առանց քննելու նորա անսահման ազատամտութեան մնաստակար կողմերը, առանց թուելու մի առ մի նորա հակառակասէր թերթին բացայայտ հակասութիւնները, մեք միայն իբրեւ ջատագով